

Ք ննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի
«25» «11» 2016 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
տնօրենի «29» «12» 2016 թ.
թիվ 224 որամանով



**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»**

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ԳՏՊԲ-ի մանկավարժական խորհրդի իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը:

1.2. Մանկավարժական խորհրդի կանոնակարգը քննարկում և ընդունում է քոլեջի կառավարման խորհուրդը:

1.3. Մանկավարժական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են նույն կարգով:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

2.1. Մանկավարժական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ԳՏՊԲ-ի տնօրենը, ով ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է: Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 1-ը: Մանկավարժական խորհրդի անդամներ են համարվում տվյալ ուսումնական տարվա համար տնօրենի կողմից հաստատված հրամանով հրամանագրված մանկավարժները /դասախոսները/:

2.2. ԳՏՊԲ-ի մանկավարժական խորհուրդը քոլեջում կոլեկտիվ ղեկավարման մարմին է , որը կոչված է նպաստելու ԳՏՊԲ-ում տարվող ուսումնական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

2.2. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են նաև տնօրենի տեղակալները, ամբիոնի վարիչները, կաբինետի վարիչները, կուրսղեկները: Մանկավարժական խորհրդի իրավասությունները դադարում են ուսումնական տարվա ավարտից հետո: Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք պետք է լինեն տարին 2-3 անգամ:

3.ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1. Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝

- քոլեջի զարգացման ծրագիրը և հանդես գալիս առաջարկությամբ
- մասնագիտական պետական չափորոշիչն համապատասխան ծրագրերի իրագործման հարցերը
- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտալսարանային և արտաքոլեջային աշխատանքների կազմակերպման հարցերը
- ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր (ֆինանսական, կազմակերպչական)
- քոլեջի աշխատանքային ռեժիմի, աշխատանքային շաբաթվա տևողության, աշխատողին խրախուսելու վերաբերյալ հարցերը և առաջարկություններ ներկայացնում հաստատության կառավարման մարմիններին:

3.2. Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝

- սովորողներին կուրսից-կուրս փոխադրելու կամ հեռացնելու մասին
- սովորողներին քննություններին թույլատրելու մասին
- սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու մասին
- անհարգելի բացակայությունների, ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին
- գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին խրախուսելու մասին
- փոխադարձ դասալսումների արդյունքում ի հայտ եկած հարցերի վերաբերյալ: